

Կիլիկիոյ սռ ԿիՊՐՈՍԻ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՔ

Ե

Կ. ԿՈՌՆ. Ա.ՐՈՑ Թ.Ա.ԳՈՒՀԻՆ

— — — — —

Ահլիկիլ և ԿիՊՐՈՍ, — երկու գեղեցիկ ն բարերեր աշխարհներ, հաւասարավէս երեւելիք զիցազնական և եղերական արարուածոլք, փառաց և անչըստմեան, յաջողութեան և ձախողութեան օրերու մէջ անբաժն ընկերը իրերաց, անուանից հեթանոսութեան միջոց, եւս աւելի ի ցրիսանէութեան, յորոց մին՝ Ա. Փալզոս մը, և միւսն՝ Բանարաս մ' ընծայեց ցրիսառնեայ կրօնից, — ունեցան երկուցն այլ բաւական հզօր և պայծառ թագաւորութիւններ՝ գրեթէ ժամանակակիցք իրերաց, և որք նոյնպէս մօտ 300 տարիներու տեւողութիւն մ' ունեցան¹, Ռուբինեան հարստութեան ամենապայծառ ժամանակը, մինչ Լեռն Մեծագործի յաղթանակաց համբաւն կը հնչէր ամենուրեց, հազիւ սկսի երեւել կիպրոսի Լուսինեան թագաւորութիւնն. և, ընդ հակառակն, կիպրոսի թագաւորաց փայլուն ժամանակներու մէջ, մինչ կ' ընկեր Յակոպ Ա, կը կործանէր

կիլիկիոյ գահն՝ այլ եւս չի կանցնելու համար, իւ ինչպէս ծանօթ և ամենուն, յետ մահուան վերջին տարաբախս Լեռն և թագաւորի, անոր իշխանութիւնն և տիտղոսն անցաւ կիպրոսի թագաւորին, որու ազգական էր ինցն², և այսպէս կոչուեցաւ նա միանդաման թագաւորը Հայոց³: Բայց կիպրոսի Լուսինեան թագաւորութիւնն այլ, յետ կորուանեյու իւր ընկեր և մերթ գորավիզն պետութիւնը, շատ երկար կեանց չունեցաւ. զի՞ այնուհետեւ յամենուստ յարձակելով թշնամիք իւր վիրայ, լրաւ բեկաւ անոնց զօրութեան առջեւ, մինչեւ որ ուրիշ ապաստանարան չի գտնելով, գահն այլ երկիրն այլ Վենետիոյ հզօր պաշտպանութեան ներքեւ դրաւ:

Կիլիկիոյ և կիպրոսի արքունի տանց առնելութիւնը շատ վաղ ժամանակներէ սկսան, որք երբէք չի նզեցան՝ բայց միայն առաջնոյն կործանելովն: Հազիւ հնոր տարի անցեր կին յետ Լուսինեան թագաւորութեան հաստատուելուն, Ամարեայ գուստըն Հելուփա՛ հարանցաւ Ռուբինի ինեմնդի՛ թոռին Ա. Լեռնի, յամին 1210⁴: ինչպէս նաեւ, նոյն թագաւորին միւս գուստը՛ Ռիպիլ, ինըն Լեռն իրեն կին առաւ⁵: Դարձեալ թորու, որդի Բ Լեռնի և եղբայր Բ Հելմույ, կին առաւ զՄարդարիտա, որ կիպրոսի Բ Հելոյի գուստը էր և Բ Հենրիկոսի բայր⁶: իսկ

1. Խուբէն կը արդէ Կիլիկիոյ մասին յամին 1080, և Լեռն վերջին գերի գ' էրնակոյ յամին 1375: Խուկիդոն Լուսինեան թագաւոր կը հրատարակուէ կիպրոսի յամին 1192-3, և վերջին թագուհին կ. Կոստանդոյ՝ կը հրաժարի թագն յամին 1489:

2. Լեռն Ե որդի էր Զուանի Լուսինեան իշխանի, որ էր որդի Ամարեայ արքայեղքօր կիպրոսի:

3. Թէ և նախ և առաջ այդ տիտղոսը կրեց Պարուս Ա (1363-1369) յամին 1368, և նոյն իսկ է Հայոց թագաւոր պատկուեցաւ, ինչպէս կ' ըստ Machaut իւր Prise d'Alexandrie քերտ թաւածին մէջ (յէլ 222): Բայց յատկապէ այդ կոչումը իրեն սեփականեց Յակոպոս Ա իւրջու 1398: (Հման. Florio Bustron, Chronique de l'île de Chypre. Paris, 1884. էջ 357. — Mas

Latrie, Généalogie des Ro's de Chypre, Venise, 1881. էջ 29):

4. Հման. Florio Bustron, Chronique, և այլն. էջ 34:

5. Մինչամ. էջ 550. Mas-Latrie, Histoire de l'île de Chypre sous les Lusignans. Paris. I. էջ 442:

6. Mas Latrie, Histoire և այլն. I. էջ 804: — Զանց կ' ընեմ յիշել ասո ոչ նուազ կարեւոր նախառավորիներ, որք տեղի ունեցան այս երես թագաւորութեանց մէջ, ինչպէս օրինակ իմն, Սմբատ թագաւոր իրեն կին կ' առանց զիազպէւ, գուստը Գուփանի նալիշնեան որ կիպրոսի սենեկալ էր. Լեռն Գ Ալեքսէս, գուստը Ամարեայ էլլիսանին Տիւրոսի, որ կիպրոսի Հենրիկոս Բ թագաւորին եղբայրն էր. — Ստեփանէ (Եմիլիա) քոյր Ա. Հեթմայ. կին Կըլլայ

յամին 1341—2, յետ մահուան Դի Լեւոնի, սա ժառանգ չի թողով իւր թագին, Լուսին նիւան ազգատոհմէն իշխան մի թագաւորեց կիլիկոյ վրայ, որ կը կի կամ Գուփտան, որդի Զօպրոնի (զսեր Բ Լեւոնի) և Արմաքբայ արքայի ղործ կիպրոսի. որու կրտսեր եղայրին ձոււան, որ ի կիլիկիս կը զանուէր նոյն ժամանակները, թագավահ զրուեցաւ մինչեւ ի զայուստ Գուփտոնի. Սա, իրու անհաւատարիմ գտնուելով ազգային օրինաց և օտար սովորով իշխաններ մաւծանելով կիլիկոյ արքունեաց մէջ, սպանուեցաւ իւր Պետանի եղբօր հետ, յամին 1344¹. Սակայն շատ հին ժամանակներ, նոյն իսկ Ա. Լեւոնի թագաւորով իշխանէն սկսեալ, Արևմտսեաց այլ և այլ սովորով իշխան մուեր էին ի կիլիկիս. վասն զի թագաւորը, որ յառաջն շարինուշ կը զնին զլափնին, այսուհետեւ ըստ սովորով մտեան լատին իշխանաց և թագաւորաց՝ բայց զլուի կը կենային, որ բնիկ ազգայնաց խորթ երեւելով, ծաղրածով մտեամբ մաշասակար (լուսուտ, փրփրած մարզ) կը կոչէին զանոնք². իսկ հանդիսից մէջ՝ արեւմտսեայ թագաւորաց կրած թագին նման, ինչպէս կը տեսնենք Ա. Լեւոնի և այլոց զրամոց վրայ³, Դարձեալ առաջինք, ըստ սովորով մտեան Պարսից, մազերնին և մօրուքին կ'աճնցնէին և երկայն կը թողուին, իսկ կիլիկիցից սկսան փոքրել զանոնք, Նոյնպէս յառաջն թագաւորը լայն և թաւ դուռաց կը հաջնէին. իսկ կիլիկիցի իշխանը և թագաւորը՝ փիլու կը կրէին, որ կարմրագոյն ըլլալով՝ ծիրանայ տեղ կը ծառայէր, և զափեալ պատուածան, ինչպէս կը կոչէ զայն ներսէս լամբրունեցնէն⁴, որ աւրիշ բան չեր բարեալ զայսեաց պատմումաւ-

նին նման, ինչպէս կը տեսնուի նոյն ժամանակի ձեռակիր նկարուց մէջ, Նոյն իսկ պետական պաշտամոնց և պատուց անուանց փառուած էին. այլ եւու չէին լուսեր ամիրայ, նեառաց, սպասարշոր, և այն, անուանք. այլ սիր, պրօքսիմու, գունդատապլ, մարտաշատ, լին, և այն⁵.

Այսեալ արշաւանք և ասպատակութիւնը թշնամեաց, որոց ննժակալ էմիշտ կիլիկիտա, կը ստիպէին ժողովրդեան մեծ մասը՝ թողով իրենց հայրէնին տունը և երթալ ապաւինիլ որիշ ցրիտսոնեաց աշխարհներու մէջ, և ի մամաւորի կ կիպրոս, որ ամենէն աւելի մերձաւոր էր իրենց տեղեաւ և առընչութեամբք. Նոյն իսկ Լուսինեան թագաւորութեան հաստատուելու ժամանակ, յամին 1492—3, կը գտնինց բազմութիւն Հայոց ի կիպրոս, աստ անէ ցրուած քաղաքաց և գիւղորէից մէջ⁶, որ կը նշանակէ թէ շատ հին ժամանակներէ սկսէր են հայ գաղթականութիւնը. Սորոց, Լուսինեանց աիրապետութեան ժամանակ, շատ ժաղկեցան և ամենէն աւելի բարձր պաշտամունք իրենց ձեռքն էին, հաւատարմութեան և անձնանութեութեան ամենամեծ ցյոյցիր տուած ըլլալով⁷, Բոլոր զիտաւոր ցաղաքաց մէջ վանքեր և եկեղեցիներ ունին, և երկու հայ եպիսկոպոսը, յորոց մին ի նիփիսիա կը նստէր, և միւսն ի Ֆամաւուսաւուս⁸: Վաճառականութեան մէջ ունեցած իրենց կարգէ զորք յաջողակութեան պատճառաւ, բոլոր կզզոյն առողեատն իրենց ձեռքն էր, որոնց վաճառուց ընդարձակ ամբարանուներ սնկին ծովեղերեայ քաղաքաց մէջ, ի Լիմասոլ, ի Պաֆոս և ի Ֆամագուտաս: Իսկ մշակութեան պարագող մասն աւելի Մեսորէայի բարձրաւանդակաց վրայ կը բնա-

1. Կիպրոսի Հենրիկոս թագաւորին, և այլն: իսկ Մաքերաս, Կիպրացի յոյն պատմէին, կը կոչէ զԼեւոն վերջոն՝ թագաւոր կիպրոսի, Երուսաղեմի և Հայոց. (Machéras, *Chronique de Chypre*, Paris, 1882, էջ 332):

2. Ա. Ալմբրուն. Թուղր առ Լեւոն. Վենետիկան:

3. Ա. Ալմբրուն. Թուղր առ Լեւոն. Վենետիկան:

4. Ա. Ալմբրուն. Թուղր առ Լեւոն. Վենետիկան:

5. Թուղր առ Լեւոն. էջ 239:

6. Անգ. էջ 240:

7. Max Latrie, *Histoire de l'île de Chypre*, և այլն. II. էջ 76, Ժանոթ. III. էջ 592:

8. Machéras, *Chronique*, և այլն, էջ 143:

9. Machéras, *Chronique*, և այլն, էջ 245-6:

կեր և կերինեան լերանց ստորոտաք. Ամենէն աւելի երկար ժամանակ տեւեցին Ապաթարիկոյ, Պլատոնի և Կոռնոնիկովո գիւղորիկց մէջ, որոնց՝ նոյն իսկ վենետիկեան իշխանութեան ժամանակ՝ զրեթէ հայ զիւղեր էին¹, Մինչեւ անզամ Նիկոսիոյ մէջ թաղ մի կայր, որ Արտեոնի կը կուռի եղեր²: Հիշրբնկալ ասպետց զիւղ մ'ունէին Լիմնոսի հիւսիսային կողմը, որ Արթեոնչարք կը կոչուրէ Յամին 1457, երբ Յակոբ Բ (le Bâtard կոչուածն) կուզէր տիրապետել Նիկոսիա քաղաքին, զինուորք զիւղեր ժամանակ սանդուներով վեր ելան պարիսպներէն, Հայոց զաներ կոչուած կողմէն, որոց պահպանութիւնն իրենց յանձնուած էր. Հայոց իսկ և իսկ արթեոնց և ի զէն կոշիցին Սակայն երբ տեսան այնչափ բազմութիւնը՝ լուսին, և ոմանց թագաւորին զօրց հետ խանութեան³, իւ այսպէս, եթէ կիպրոսի ամրոջ պատութիւնը աչք անցունենի, պիտի չի զանենի Էլ մը, յորում չի իշուին Հայոց: — Ասցնինք արդ կ. Կոռնարոյ թագուհւոյն, որ վերջին անզամ ամենայն շրջի կրեց կիպրոսի, Հայոց և Երուսաղեմի թագը, և ապա Ազոլոցի մթութեանց մէջ կնըց իւր կեանըը⁴:

*
* *

Յամին 1458 մենսերով Յովհաննէ Գ Լուսինեան, իրին յաջորդեց դուռարն Կարլոսա, որ սաւոյացի Լուսուկի զցին հետ ամուսնացաւ: Թագալցութեան հանգին որչափ որ շրեղութեամբ եղաւ, նոյնչափ եւս ձախող նշաններով վերջացաւ: Վասն զի, ինչպէս կը պատմէ Լորեզան՝ իւր Պատմութիւնը Լուսենան բագառորաց⁵ զրցին մէջ, « Հազիւթէ թագուհին զուրս եղաւ եկեղեցին, զանազան

զիշատիչ թոշունը կառաշելով անցան զիսուն վրային, և մողովդեան աղազակներէն՝ անոնցմէ մին չկարենալով կենալ օգուն մէջ՝ զիսուն վրայ ինիաւ. Փոքր մի յետոյ, արքանի պատաստան զաւթին մէջ, յանկարծակի շարժմամբ մի թագն զլիսէն վայր ինիաւ, որը տեսնելով բաղումք՝ զահազան չար մեկնութիւններ տուին այն իրին⁶ »: Եւ յիրափի, շատ չանցաւ՝ իւր խորթ եղբայրն Յակոբ (Բ), որ յատան սկը, յարզանց և հպատակութիւն կը ցուցնէր քոռչն, իմանալով թէ վրան ամբաստանովին եղեր է առ թագուհին և զինըը կ'ուղեն բանել, թոզուց իւր եպիսկոպոսական աթոռը, — զի Հայրն՝ յաջորդութեան իրաւունքն զրկելու համար զինըը՝ Նիկոսիոյ արքեպիսկոպոս զնել տուեր էր, և փախաւ առ սուլցանն Եղիպատուի՝ օգնութիւն և զէնը ինդեպուտ, որ կարենայ տիրապետել կիպրոսի. որուն՝ սուլցանն ոչ միայն ոսկի թագ և ծիրանի տուաւ, այլ և ահազին համատրմիդ մը, որով կրցաւ առանց գուռարութեան տիրել Յամազուստա քաղաքին և յետոյ Նիկոսիայի, ուր բոլոր ժողովուրդն մեծամեծը ուրախութեամբ ընդունեցան զինըը: Նորափայլ աստեղ չկարենալով ընդդիմանալ, սովորեցան տեղի տալ կարուստա և Լուգուիկի: Հազիւթէ թագ և գաւազին՝ մասագոր փախան ի կերինա, կղզուն հիւսիսային կողմը, ուր հանգարտ իւ թողուց զանոնք Յակոբ, այլ հասաւ պաշարեց և անտի եւս հայածեց. ուրնց յետ ի գոր զիմելու առ րոլոր արցունին կրոսպիոյ, ի վերջէ ուրեմն համակամեցան իրենց ձախող բախանի, և այնուհետեւ կրուեն այլ թագուեցան յանչուց մոռացութեան: Յամին 1462, հանդարտած ամէն կոզմէ և անկասկած, Յակոբ Բ՝ կիպրոսի

1. Mas Latrie, *Histoire*, և այլն, I. էջ 105-6. Lusignan, *Histoire de Chypre*, fol. 72-75:

2. Strambaldi, ann. 1378, ms. de Paris, fol. 226. 227:

3. Florio Bustron, *Chronique*, և այլն. էջ 376:

4. Կ. Կոռնարոյի մասին հետեւեալ համաստ տեղեկութեանց մէջ, հետեւեր եմ ընդ-

հանդապէս Attilio Centelli և Caterina Cornaro e il suo regno » գրքին, « բ լոյ» տեսերէ է ք զէնեակէ, յամին 1892:

5. Historie de Re Lusignani, որ հրատարակուեցաւ Henrico Giblet Kavalier անուան ներքեւ. Bologna. Monti, 1647:

6. Attilio Centelli, Caterina Cornaro e il suo regno. Venezia, 1892. էջ 37:

թագաւոր ճանշցուեցաւ Եղիպտոսի սուլդանէն և Վենետիկյ հասարակապետութենէն։ Վերջնու, իւր նրբին խորագիտութեամբ, արդէն շատ վար ժամանակներէ տարածեր էր իւր հզօր ազգեցութենը կիպրոսի վրայ, ուր ունէր միշտ իրեն ճարտար ներկայացուցիները, և ուր կը խոյանար անզպաքը Ս. Մարկոսի թեւաւոր առիւնն, որ օր մը → և շատ հեռու չեր այդ օրն՝ իւր թեւոց ներքեւ պիտի առնուր զայն։ Այս մոտածութեամբ է անշուշտ, որ Վենետիկյ հասարակապետութիւնն ուզեց անձուկ միութեան կապ մի հաստատել իրեն և կիպրոսի արքունի տան մէջ, իւր ամենէն աւելի հին և ազնուական ընտանեաց միոյն գուստը հարանացնելով թակոր թ թագաւորին։ Ի Վենետիկ և կիպրոսի արքունեաց մէջ՝ նշանաւոր էր իւր բարձր աստիճանափակ և ազգեցութեամբ՝ Մարկոս կոռնարոյ գինեատիկը պատրիկն, որոյ կատարին է զուարն ընարեցաւ ապագայ թագուհի կիպրոսի։ Շատ մեծահանգէս եղաւ հարանախօսութիւնն, յամին 4468, յորում թագաւորին ներկայացուցիչն քր Միստանէ զեսպանն, որ նախորդ տարին եկեր էր ի Վենետիկ այլեւայլ քաղաքական ինպրոց պատճառաւ։

Կատարինէ, տակաւին իւր թարմ հասակին մէջ, խոհական ծանրութիւն մի միացուցեր էր իւր մանկական պարզութեան հետ։ Մնողաց գորովյ միակ առարկայն և աշքի լրյոն էր, որով և ամենայն իննամբ ցուցին անոր կրթութեան։ Տասնամեայ Պատուայի Ս. Բինեպիկտոսի կուսաստանէն մէջ զորւեցաւ, ուր կ'ապրէր տակաւին՝ անծանօթ և անդիտակ իւր ապագայ մեծութեան, երբ հասարակապետութիւնն կ'որոշէր զինքը ի բարձր զշնոյութեան։ Այս լուր տարածուելուն պէս՝ բոլոր Վենետիկի թիզաց ուրախութենէն, մեծ պատիր համարելով իրեն այն բանը։ Հանդիսին օրը՝ կը պատէ Մալիպիկիրոյ՝ բանակապիրն։ Ոչ նուազ հանդիսին և շրով տարուեցաւ զարձեալ կատարին էր հայրենի պալատը, յորմէ ելաւ առաւոտը իրը համեստ օրիորդ մի, և մի քանի ժամ յետոյ կը մանէր անդ իրու զինոյ մի։ Սակայն և այս տեղ՝ աշխարհի երջանկութեան բաժակն շեղաւ բոլորովին անխառն ի զանութենէ։ Ջան զի վենետիկան քաղաքականութեան հակառակ ոգով և տեսութեամբ զրդեալ պազու կուսակցութիւնը այնքան այլայլցին թակոր թագաւորին միացը, որ տարուէ տարի կը յետաձգէր կատարինեայ հետ ընելիք իւր ամսնանութիւնը, և գուց բոլորովին իսկ թուզուր կամ փոխէր այդ դիտաւորութիւնը, եթէ Վենետիկ չերեցնէր յայլայլցին իւր աղեղ։

4. Dom. Malipiero, *Annali veneti dall'anno 1457-1500, ordinati e abbreviati dal sen. Fr. Longo, con pref. e annot. di Ag. Sagredo.*

նուն և տանին զիատարինէ ի զրուական պալատն։ Ուրիշ արկնայք կը սպասէին ընդունելով զօրիգրն՝ սանդինոց առջեւ, որոցէ վեր ենիլով կը մտնէր զեռ այն ինչ տարտած մեծ խորհրդոյ շըեղ զահճին մէջ։ Այդ կը սպասէին իրեն՝ գուցնու Քրիստոփոր Մորոյ, ծերակոյաց, զործակալը և բոլոր պետական իշխանաւոր անձննեց։ Մէկ կողմէ կեցեր էր կիպրացի գեսպանն, որոն մատոյց զաւըն օրհնեալ մատանի մի, զոր նա կատարինէի մատը անցուցեր էր՝ յանուն Լուսինեան թ Թակոր թագաւորին կիպրոսի, Հայոց և Երուսաղեմի։ Ո՞ զիտէ, որքան այլայլիք էր զեռատի օրիորդն, որ չորեցաւասանամեայ՝ կուսաստանի խաղաղ մթնոլորտէն կը տեսնէր զինքը յանկարծ փոխազրուած այնքան շըեղութեանց մէջ, ուր կը շողային իւր շուրջը իշխանաւորը և ազնուականց, ոսկի, մետաքս, գոհար և ազամնղը, և ինցն էր զինաւոր զերակատար այն հանդիսին՝ որոյ կարեւութիւնը ըրմունելու տակաւին անկարող էր ինցն։ Անընքան բազմաթիւ էին հանդիսատեսնեց, որ չի բաւելով մեծ խորհրդոյ արակն, — որոյ մակերեւութիւն շափն է հազար քառական մետրէն աւելի, — անոր կից Քրօցած կոչուած որահի զոներն այլ բացին, ինչպէս կ'ըսէ վերոյիշեալ Մալիպիկիրոյ ժամանակապիրն։ Ոչ նուազ հանդիսին և շրով տարուեցաւ զարձեալ կատարին էր հայրենի պալատը, յորմէ ելաւ առաւոտը իրը համեստ օրիորդ մի, և մի քանի ժամ յետոյ կը մանէր անդ իրու զինոյ մի։ Սակայն և այս տեղ՝ աշխարհի երջանկութեան բաժակն շեղաւ բոլորովին անխառն ի զանութենէ։ Ջան զի վենետիկան քաղաքականութեան հակառակ ոգով և տեսութեամբ զրդեալ պազու կուսակցութիւնը այնքան այլայլցին թակոր թագաւորին միացը, որ տարուէ տարի կը յետաձգէր կատարինեայ հետ ընելիք իւր ամսնանութիւնը, և գուց բոլորովին իսկ թուզուր կամ փոխէր այդ դիտաւորութիւնը, եթէ Վենետիկ չերեցնէր յայլայլցին իւր աղեղ։

(T. VII. p. I. e p. II dell'Archivio storico). Firenze, 1843-44.

ցովեեան բոլոր պյժը՝ Հինգ տարի յետոյ՝ կատարինէ, յամին 4472, կիդոյի Առօքք Նիկողայոսի գանգին մէջ տալով իւր հրամեշար յետին և սրտաճմէիկ ողջոյնները՝ նախ Նիկողայս Տրոն զբախն, որ Քըրիտափոր Մոռոյի յաջորդեր էր նոյն տարիներուն մէջ և Վենետիկոյ բոլոր ազնուականաց ընկերութեամբ եկեր էր զինքը ուղարկելու, յետոյ իւր ամէն ծանօթից, ազգականաց և ծնողաց, որոց գրիէն հաղի կրցաւ բաժնել ինչպինքը, սեպտեմբերի վերջին օրերէն միայն մէջ, առավոտեան զմբ, ճամբայ եղան Լիդոյին Վենետիկոյ չորս ցոկանաց, և Յակոբ Թագաւորին երեք մեծ նաւերն, որը պիտի տանէին զկատարինէ մինչեւ ի կիպրոս։ Հասարակապետութեան կողմէն իրոր զեսպան և առաջնորդ՝ կ'ընկերը իրեն Անդր. Տրիգապինոյ, ուրիշ բազմաթիւ ազնուականներու հետ՝ որոնց թագուհոյն մերձաւոր սպասարկուց պիտի ըլլային։ Մ'հ, որպիսի գէմրնզգէմ զզացումներ գրաւեր էին արդեօց անոր միտքը ուղեւորութեան միջոց, որ կը թուղյոր զհայրենիս, կը թողոյր ծնողքը և սիրելիքը, կը թուղյոր իւր անդորրաւու օրերը, և կ'երթայր անծանօթ աշխարհ մը, ուր ուրիշ գութք և զզացմունց, ուրիշ սովորութիւնը, ուրիշ լեզու մը, ուրիշ պարագեր, ուրիշ և ծանր խոշչնզակը կը սպասէին իրեն։ Ալբայաշուը խումբն հասաւ ի Նիկոսիա, ուր շեղեղ հանդիսից ըրաւ իւր մոտաքը։ Թագաւորն, իշխանը և բոլոր ժողովուրդն մեծամեծ պատուիլ ընդունեցան զինքը, որոնց յաջորդեցին հարսանեաց քըղաքավայլ հանդիսաւ ի Նիկոսիա, ուր շեղեղ հանդիսից ըրաւ իւր մոտաքը։ Թագաւորն, իշխանը և բոլոր ժողովուրդն մեծամեծ պատուիլ ընդունեցան զինքը, ուրիշ սովորութիւնը, ուրիշ մատուցմէնին սպասից և այլ մեծ ժամեծաց, Յակոբ Գ կոչեցին Սակայն այսու չի դարձեցան Վենետիկոյ թշնամեաց զաւարութիւնը. մանաւանդ թէ առիթ առնլով այն պարագայն, որով թագուհին՝ իւր մայրական պարուոց մոտավոր՝ որդուոյն զաստիքարակութեամբ զբաղեալ էր քողորովին, փորձեցին նորէն ուր հանել ֆամագուստա քաղաքը։ Թէ և մասնական էր ապատամբութիւնն, բայց շատ եղերական հետեւանցներ ունեցաւ. զի բաց ի կատարինեայ բժիշկն և անոր մէկ ծառայէն, նոյն օրը (ի 45 նոյեմբերի 4473) անզմօրէն սպանուեցան թագուհոյն հօրեղայրն Անդրէա կոռնարոյ և մերձաւոր ազգական թեմբոյ՝ որը զինքը ապատելու եկեր էն։ Վասն զի սպատամբք, որոց մէջ էր Իրոցոյ Մարին՝ բուն սպանուզն Անդր. կոռնարոյի թեմբոյի, յարձակեր էն արքունի պալատան վրայ՝ ուր կը զանուէր կատարինէ. և գահընկեց հրատարակելով զնա, թակու-

հրամայեց Մոչենիզոյ ծովակալին, —որ յետոյ գուբեռ եղաւ, և նոյն պահուն իւր նաւատորմով կը գտնուէր Միջերկրականին ջուարիուն մէջ, որ մի քոնի ամիս յառաջ Զմիւն նոյն տաջնեւ փառաւոր յաղթութիւն մի տարեր էր թշնամեաց վրայ, — որպէս զի փութայ ի կիպրոս երթալու իւր նաւատորմոյի կղզուոյն խաղաղութեան և թագուհիցն կ'ենաց ապահովութեան վրայ հսկելու համար։ ի նմին ժամանակի կը գրէր նաև առ կատարինէ, թէ հրամայեց էր Մոչենիզոյի՝ որ ամուսէն անուածեան ֆամագուստայի նաւահանգստին մէջ հինգ ցոկանաւ թողու իւր արամաղրութեան ներբեւ։

Կատարինէ միայնակ մնացած, իսկոյն իւմացաւ թէ որքան գտնուարին և վտանգաւոր էր օստար երկրի մէջ մարզութիւն ընել. զի մէկ կողմանէ պատուիրակը նապոլիի թագաւորին, որ այց ունէր կիպրոսի աթօնին, և միւս կողմէն՝ Յակոբ թագաւորին մերձաւոր ազգականց՝ անդապար ծածուկ մերձնաներ կը լարէին իրեն զմ։ Այսպիսի տագնապատից վիճակի մէջ էր՝ երբ կատարինէ որդի մունեցաւ, յամին 4473, զոր մեծահանգէս շըելութեամբ մկրտելով ի ներկայութեան վենետիկոյ զեսպանին, Մոչենիզոյ ծովակալին և անոր նաւատորմոյին սպասից և այլ մեծ ժամեծաց, Յակոբ Գ կոչեցին Սակայն այսու չի դարձեցան Վենետիկոյ թշնամեաց զաւարութիւնը. մանաւանդ թէ առիթ առնլով այն պարագայն, որով թագուհին՝ իւր մայրական պարուոց մոտավոր՝ որդուոյն զաստիքարակութեամբ զբաղեալ էր քողորովին, փորձեցին նորէն ուր հանել ֆամագուստա քաղաքը։ Թէ և մասնական էր ապատամբութիւնն, բայց շատ եղերական հետեւանցներ ունեցաւ. զի բաց ի կատարինեայ բժիշկն և անոր մէկ ծառայէն, նոյն օրը (ի 45 նոյեմբերի 4473) անզմօրէն սպանուեցան թագուհոյն հօրեղայրն Անդրէա կոռնարոյ և մերձաւոր ազգական թեմբոյ՝ որը զինքը ապատելու եկեր էն։ Վասն զի սպատամբք, որոց մէջ էր Իրոցոյ Մարին՝ բուն սպանուզն Անդր. կոռնարոյի թեմբոյի, յարձակեր էն արքունի պալատան վրայ՝ ուր կը զանուէր կատարինէ. և գահընկեց հրատարակելով զնա, թակու-

Հի հոշակեցին թակոր թագաւորին անհաս-
րազատ գուստորի՝ կարլոստա լուսինեան,
ամուսնացնելով զնա՝ Նապոլիի ֆերդինանդ
Ա. թագաւորի որդուն՝ Ալբոնսոսի հետ, ո-
րուն Գոլիխոյ իշխանի տիտղոսը տուին:

Թուի թէ նոյն իսկ սպամալեօք բռնա-
զատեցին զթագուհին՝ որ յետս կոչէ կերի-
նայի զղեկին հրամանատարը, որ կատարի-
նէի հաւատարիմ անձինքներէն մին էր. և
այս առթիւ էր, որ ապստամբը յափշտակե-
ցին թագուհւոյն դոհարները և ապամանինե-
րը, ոսկի և արծաթ անօթները, և կը յա-
ւելու Մալիխիերոյ, նաեւ վաթսուն հազար
դուկատ, առանց կարեղեցելու անոր աւազելի
վիճակին վրայ: Եւ այսպէս, կատարինէ միայն
« ծովս և արտաքին երեսյժոն » ունէր թա-
գաւորովթեան՝, իսկ իրեն շուրջը խարդախ և
նենգաւոր անձննը՝ որը կը զարանկին ան-
դուզ իրեն կենաց և իշխանովթեան: Նոյն
իսկ նիկոսիոյ արքեպիսկոպոսն, զոր Յակոբ
Բ բարձրացաւցեր էր այդ աստիճանին,
թշնամի էր թագուհւոյն և կուսակից ֆեր-
զինանը թագաւորին: Իրաւ է, թէ շատք կը
սիրէին զի՞նքը, բայց երկշուր էին:

Թէ և երկորդ անգամ մի եւս վենետիկոյ
նաւատորմիլն զնաց ի ֆամագուստա, ան-
միջապէս յետս ապստամբովթեան, որպէս զի
արդելու (ինչպէս կը զրէր ծերակոյտն առ
Մոչենիկոյ ի 20 զելտեմիկերի), որ զարձեալ
չի կրնուի. սակայն չկայր այլ եւս Անգր.
Կոռոնարոյ՝ որ հակէր թագուհւոյն կենաց վլ-
րայ, և Մոչենիկոյ չէր կարող նկել բոլո-
րովին վենետիկեցւոց զէմ եղած դաւակցու-
թեան թելերը, որուն մասնակից էին ինչ-
պէս ըստինը՝ Նիկոսիոյ արքեպիսկոպոսն, Բից-
ցոյ Մարին, Լուկուիկ Ալմերիդ, զունդատապէն
կարկերան Սուարէզ, Սապլատա և այլք, և
զիկաւորապէս Նապոլիի արքունիքն՝ որ զըր-
զիչն էր ամենայն թշնամովթեանց: Ուրիշ ան-
գամ զարձեալ Բիցցոյ նոր զաւարութին
մի կազմած ըլլալով, այսինքն է Ալֆոնսոսի

հետ կիպրոսի ծովափը եղնել և տիրել թա-
գաւորովթեան, իմացաւ զայն ջասանց Ա-
տեան, և հրամայեց (4476 Թուիխ 9) Լո-
րեզան ծովակալին՝ որ փութայ ի կիպրոս:
Նա ապստամբաց զինաւորներէն ութը ձեր-
բակալից և ցոկանակերու մէջ զրած վենե-
տիկ ուղարկեց, ինչպէս նաև Յակոբ եր-
կորդին անհարազատ որդիքը: Այս ամենայն
ազետից վրայ աւելցաւ մեծապոյն մ'ալ, որ
բոլորովին ընկճեց թագուհւոյն սիրութ. մեռաւ
որդին, հազիւ մէկ տարեկան, իւր մէկ հա-
տիկ յօյն և գորովանաց առարկայն:

Հ. ՅՈՎՀ. ԹՈՐՈՍԵԱՆ

Շարայարելի

...><...

ՊՍԱԿ ՄԸ

ՓՐԻԴԻՌԻԽ ՄԻՒԼԼԵՐԻ

ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՎՐԱՅ

(Եար. տիս էջ 481)

ԹՈՒՂ. Ա.

ԴԵՂԱՐԱՆ

Կ. Յ. ՊԱՍՄԱՆԵԱՆ

ՅԱԿՈՎԱՐ. ՍԵԼՄԱՆՉ-

ՄԵծամութ Գիտմական.

Zeitschrift für die Kunde des Morgenlandes պատուական թերթին մէջ Զեր
զրած մի յօդուածն՝ Հայ Եղանակրաց մա-
սին, թարգմանաբար հրատարակուած էր և
« յԱմօրեայ հանգէնն » Վիեննայի:

questi se contenterà de dar fumo e dimostration a la Maestà de la Regina et loro manizare tutto questo regno et ogni sua facultà come li piacerà ». (Att. Centelli, Caterina Cornaro, etc. էջ 76):